ոչ ով չէ պատճառ եղեր,
չեմ այլոց ձեռօք ես խաբեր։
(Հոպ. ԺԵ., միայն Քուչակ).

23. *Իմ սըրտիս յաւժար կամքըն*
ի ամէն մեղք եմ հանդիպեր.
միոյն հակառակ կացեր
զօրինաց ցանկն եմ պատառեր։
(Հոպ. ԺԵ., միայն Քուչակ).

24. *Ցաշխարհս է ի ծով նման*
ու մարդիկ ի ներս կու լողան.
մարմինքս են նաւի նըման,
հոգին գանձ է անապական։

25. *Զարթիք զինչ գարնան ծաղիկ*
փրթրթին ւ այլվի չորանան,
երանի հաղար բերան
արդարոցն աւուր գալըստեան։

Ցովհ. Թադէոսեան.

Ի՞ՆՉ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԷՏՔ Է ԱՆՑՆԵԼ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

(«Ուղեցոյց տարրական ձայնագրութեան».
կազմեց Շահան Սիմոն.)

Վերջերս լոյս է տեսել «Ուղեցոյց տարրական ձայնագրութեան» անունով մի գիրք, որ ուշադրութեան արժանի է ոչ այնքան իւր պարունակութեամբ, որքան կողմնակի կերպով այն խնդիրն արծարծելուն համար, թէ ի՞նչ սիստեմով պէտք է անցնել մեր դպրոցներում երաժշտութիւնը։

Գրքոյկի հեղինակն այսպէս է պատասխանում. առաջին տարին կարելի է թուանշանական սիստեմով անցնել, երկրորդ տարին՝ Հայկական ձայնագրութեամբ, և երրորդ տարին՝ գծա-

յին սիստեմով. և իւր որոշման համաձայն ընդունելով, որ թուանշանական սիստեմը «ձայնագրութիւն ուսուցանելու անհրաժեշտ միջոցն» է, հրատարակում է այդ սիստեմով և «խմբական երգեցողութեան գործը փոքր ի շատէ արագացնելու, հեշտացնելու նպատակով» կազմած սոյն տետրակը:

Մենք տրամադիր ենք հակառակ կարծիք ունենք: Եթէ խնդիրը հեշտութեամբ ձայնագրութիւն սովորեցնելու մասին է, ուրեմն պէտք է ընտրել այն սիստեմը, որն աւելի պարզ և դիւրըմբռնելի հիմունքների վերայ է դրուած, որի գրութեան ձևից իսկ կարելի է պատկերաւոր կերպով տեսնել ձայնագրութեան «գաղտնիքը»՝ ձայնամիջոցները: Ի նկատի ենք առնում այստեղ միայն ձայնամիջոցների պատկերաւոր արտայայտութիւնը, որովհետև սիստեմի միւս տարբերութիւնները կամ ոչ մի նոր հեշտութիւն և յարմարութիւն չեն բերում՝ ինչպէս օր. ձախից աջ, աջից ձախ քաշած թեք գծերը և մեր կիսվեր-կիսվար նշանները՝ դիեզ և բեմոլ նշանների վերաբերմամբ. կամ բերած նորութիւնն էլ այնպիսի անմիտ բան է լինում, որ ի վնաս միւս սիստեմի ուսուցմանն է ծառայում. օր. կէտը թուանշանական սիստեմում, ինչպէս և հայկականում, մի բաղխում է նշանակում, իսկ գծային սիստեմում այն խաղի տևողութեան կէտը, որի մօտ դրուած է:

Թէ որքան գծային սիստեմը, ձայնամիջոցների պատկերաւոր արտայայտութեան կողմից, գերազանց առաւելութիւններ ունի քան թուանշանականը, այդ երևում է հէնց այն հանգամանքից, որ թուանշանական սիստեմ բացատրող ուսուցիչը ստիպուած է, աշակերտներին «ձայնամիջոցների գաղտնիքը» բացատրելու համար, դիմել գծային օգնութեանը՝ նկարելով



կամ

, և ապա միայն, թուանշաններով աստիճանները որոշելուց յետոյ, գծերը վերցնել և թողնել թուանշանները: Եւ ինչի՞ համար. եթէ մեր նպատակն է ձայնանիշների յարաբերութիւնը աւելի հեշտ և պատկերաւոր կերպով ներկայացնել աշակերտին, ինչու՞ մի նոր և աւելորդ բեռ դնել նորա վրայ՝ հեռացնելով գծերը և թողնելով միայն թուանշանները: Որպէս զի «մի ուղիղ գծի վերայ» կարողանանք գրել. այդ պատճառաբանութիւնը շատ չնչին է և անիմաստ:

Թուանշանական սիստեմը ոչ մի դիւրութիւն չի բերում իւր հետ: Ասել, թէ «այս (Էմիլ Շեվէի) սիստեմը վաղուց ընդունուած է ռուսաց մանկավարժական աշխար-

հում», դեռ բաւական վատ չէ. դուք ինքներդ, ինդրեմ, բարեհաճեցէ՛ք ցոյց տալ գծայինի վերաբերմամբ այս սիստեմի առաւելութիւնները՝ մի սիստեմի, որ հենց Շեվէի հայրենիքում անդորձածութեան է դատապարտուած... շնորհիւ իւր առաւելութիւնների։

Ինչ որ մի ժամանակ կոպիտ զինուորների համար հարկաւոր է թուել ուրիշ ազգերի մէջ և այժմ բոլորովին անյայտացել է, բերել և մեր խեղճ ու կրակ դպրոցների վրայ վատթարել, անբարեխիղճ բան է։ Բաւական էր միայն մի քիչ լաւ մտածել, բաւական էր փոքր ինչ պակաս ինքնավստահութիւն ունենալ, որպէս զի երևաը, թէ որչափ անտեղի է ձեռք զարկել մի այնպիսի գործի, որ նախ երաժշտական հմտութիւն է պահանջում և երկրորդ մանկավարժական ընդունակութիւն, որոնցից դրժբախտաբար գրքոյկիս հեղինակը զուրկ է։ Դորա համար վատաբեր վկաում են ամեն երեսում. յիշենք օրինակ այն խոշոր սխալը, թէ փo-ից խo հինգ աստիճան է (50 եր.). թէ «երգելիս լեզուն պէտք է գոգաձև — պառկած մնայ» (10 եր.). կամ այն չնաշխարհիկ յաւելուածը, ուր 55-ն ու 88-ը ազատ ասպարէզ ունեն։ Յիշենք հեղինակի առաջարկած վարժութիւնները, որտեղ ամէն տեսակի թռիչքներ կան հենց առաջին դասից սկսած, կամ նորա 7 խազի և 36 տառի համեմատութիւնը և՛ն. և՛ն.

Ժխտելով թուանշանական սիստեմի օգտակարութիւնը մենք համամիտ չենք նաև «ազգասիրաբար տրամնջողների», ինչպէս գրքոյկի հեղինակն անուանում է, կարծելին, թէ պէտք է հայկական խազերով ձայնագրութեան տարրական մասն անցնել։

Նախ նկատենք, որ մեր մէջ այժմ գործածական ձայնանիշներին Հայկական անուն տալը և նորանով պարծենալը մեծ անտեղութիւն է. այդ 7 ձայնանիշները ոչ այլ ինչ են, բայց եթէ հին բազմաթիւ ոչ ազգային, այլ ընդհանուր մարդկային խազերից մի քանիսը, եւրոպական եօթնեակի (գամմա) նմանողութեամբ սարքուած։ Այս ձայնանիշներով չպէտք է սկսել սովորեցնել մանուկներին երաժշտութիւն, որովհետև սոցա յարաբերութիւնն ու ձայնամիջոցները աչքի համար բոլորովին անտեսանելի են՝ մի բան, որ երկար ժամանակ արգելք է լինում ձայնամիջոցների ուղիղ ըմբռնմանը։ Սակայն սորանով չենք ուզում ասել, թէ այդ խազերը՝ ձայնանիշները, բոլորովին բարձի թողի պիտ անենք։ Ո՛չ, քանի որ մեր եկեղեցական գրքերը այդ խազերով են ձայնագրուած, քանի որ եւրոպական խազերով երգողներին մատների վերայ կարելի է հաշուել, դորա պիտի պահուն և դաս

տրուեն,—բայց այն ժամանակ, և հարկէ եթէ չենք ուզում թութակները պատրաստել, երբ արդէն 1 կամ 2 տարի դծային սիստեմով վարժուել են: Անհրաժեշտ ենք համարում այդ պայմանը, որովհետև միայն այդ դէպքում ըստ ամենայնի աշակերտի առաջ ձայնամիջոցների գաղտնիքը բաց կլինի՝ մի գաղտնիք, որ դաշնակի (гармонія), բազմաձայն երգեցողութեան հիմքն է կազմում:

Դպ. Սպ. Մելիքեան.

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ.

ՄԵԾ ԵՂՋԻՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ.

Կաթի գործարանը.—Յայտնի է, որ կաթի թէ քանակի և թէ յատկութեան վերայ ցեղը, խնամքը, մանաւանդ կերը մեծ ազդեցութիւն են ունենում: Կան նաև ուրիշ երկրորդական պատճառներ, որոնք դարձեալ որոշ չափով ազդում են: Անաչառապահութեամբ պարապող ամէն ոք տեսած կլինի, թէ ինչպէս միևնոյն կերն ուտող, բայց տարբեր պայմաններում ապրող մի կով տարբեր քանակութեամբ և յատկութեամբ կաթ է տալիս: Սորա պատճառները բարդ են և բազմապիսի, բայց աւելի շատ բան կախուած է այն գործարանի—դեղձի կազմութիւնից, որտեղ պատրաստւում է կաթը:

Կաթնային գեղձը բաղկանում է առանձին քանակութեամբ փամփշտիկներից կամ վանդակիկներից, որոնք միաւորող անկուածի օգնութեամբ միացած են և շրջապատուած ճարպային հիւսուածքով: Փամփշտիկներից կաթնատար նեղ անցքերը աստիճանաբար միանալով, մեծանում են և վերջը կազմում կաթնամբարներ, որոնցից, յետոյ դուրս են գալիս առանձին խողովակներ պտուկների մէջ. սոցա վերևի մասը կոչւում է հիմք, իսկ ներքևինը կազմում է իսկական պտուկը: Այս վերջնի մէջ են գտնուում մկանային թելերը, որոնց ամփոփումը և կրճատումը կենդանու կամքից անկախ է: Հէնց այդ մկաններն են